


ՏԱՍՏԵՆԻ ԵՐՐՈՐԴԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրային գիտնական և ուղղակի  
Тужаев. Редакция «Маяк».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լոկալով:

Ցայտարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիկ լատին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԳՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Շուշուց: Նա-  
մակ Ախալքալաքից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թավրէզի մէջ պատահած վերջին  
անցքերը: Նամակ Գեղամահալից: Արտաքին լու-  
րեր: ՌԱՌՆ ԼՈՒՐԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:  
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Թիֆլիսի տպակազմակերպի  
«Լոյս» ընկերութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

Մայիսի 11-ին

Ամսոյ 9-ին Շուշիի մէջ զարմանալի արագու-  
թեամբ տարածվեցաւ Ս. Էջմիածնից հասած ու-  
րախ լուրը, որ ոգեւորեց, ուրախացրեց ամենքին:  
Դեռ մինչև այդ օրը ժողովուրդը վերին աստիճա-  
նի լարված անհամբերութեամբ, այսպէս ասած,  
չնչապատ սպասում էր, թէ ինչ հետևանք կը  
բերէ այդ օրերի ընտրութիւնը, գործերի դու-  
թիւնը շատ խառն էր և խճճված, ուստի երկար  
սպասելով, խրաբանչիկի սիրտը ուժգին տրո-  
ւում էր անհամբերութեամբ: Եւ աստ, երբ բազ-  
մութեան մէջ յայտնի դարձաւ Ներքին ընտրու-  
թիւնը, կարծես, մի գիւթական այժ պատուէր իւ-  
րաբանչիկի երեսի ծածկած մաշկ, մտայնող տըխ-  
րութեան և անհանգստութեան քողը, Ներքինի  
անունը էլեւթորական կայծի արագութեամբ և զո-  
րութեամբ անցաւ ամբողջ միջով և այդ դէպքերը  
փայլեցին ուրախութեամբ, խրաբանչիկը ազատ  
չունչ քաշեց, կարծես ազատվելով մի ծանր կոշ-  
մարից, կարծես սարի պէս ծանրութիւնն ընկաւ  
կողի ուսերից: Ուրախացան ամենքը, առանց  
կորնի և ազդութեան խորութեան, չը նայած  
զիրեն ու դրութեանը, վիճակին ու կարողու-  
թեանը. մարդիկ շնորհաւորում էին միմեանց,  
սեղմում էին միմեանց ձեռքերը, ուրախութեամբ  
ամեն մէկը արտասանում էր իր սիրելի Ներքինի  
անունը և նրա մէջ գտնում էր իր վաղեմի բազ-  
մաքի իրագործումը: Շուշուցու առհասարակ սա-  
ռն ու անտարբեր հոգին չը կարողացաւ դիմա-  
նալ րօպէի հանդիսաւոր ներգործութեանը և ա-  
մենքը միապաղաղ խառնվեցան, յօդուցան մի  
ընդհանուր ուրախութեան մէջ, որով սոցորոված  
էր հասած լուրը: Խաւարամիտները այսպիսի մի  
թողութեամբ մէջ յանգնում էին դեռ ուրանալ  
հասարակական կարծիքը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՊԱՅՎԱԶԱՌՆԵՐԻ «ԼՈՅՍ» ԸՆԿԵ-

ՐՈՒԹԻՒՆԸ

Վեց ամիս կը լրանայ շուտով, որ Թիֆլի-  
սում «Լոյս» ֆերմայի տակ կազմակերպվեցաւ մի  
տարի առաջ պ. Գր. Աբուխալիլի ծրագրած ապա-  
կեմականների ընկերութիւնը, որը առաջ ժամա-  
նակ շատ սահմանափակ կերպով սկսել էր իր  
գործունէութիւնը:

Գործի սկիզբում մենք «Մշակ»-ի միջոցաւ յայտ-  
նեցինք այդ առթիւ մեր ուրախութիւնը, յայտնե-  
ցինք նաեւ որ շատ դժուարութեամբ և բաւական  
խոչնդոտների հանդիպելուց յետոյ են մեր մէջ ա-  
ռաջ գալիս հաւաքական ոյժերով գործող մարմին-  
ները, քանի որ մեր մէջ վաճառականական դասա-  
կարգը դեռ ևս բոլորովին չէ թօթափել իր վրա-  
յից չարիական հին փոխին: Սակայն, այնուամե-  
նայնս, առաջին փորձերը, որքան էլ փոքր, որ-  
քան էլ թույլ լինէին նրանք, արժանի են ամենայն  
համակրութեան և խրախուսանքի:

Ներկայ առևտրական ճգնաժամի մէջ, դրամա-  
կան այդ սարսափելի կրիզիսային սեղանում, բո-  
ւորովին կը ունչանայ մեր վաճառականական  
գասակարգը և կամ նա կը փնտրուի զգալի կեր-

Մտացանք ասել, որ այստեղ էլ բացառու-  
թեան օրէնքը ցոյց տուեց իր ոյժը և երբ ուրախ  
էին թէ լուսաւորական և թէ առևտրական  
հայերը, մի քանի հատ Նոր-Վարականներ տխուր  
էին և զժգոհ:

Գաւառացի

ՆԱՄԱԿ ԱՌԱՎՔԱՎԱՔԻՑ

Մայիսի 16-ին

Կան մարդիկ, որոնց համար կարգ ու խաղ ձեռ-  
նալ մի տեսակ ախտ (mania) է դարձել: Այդ-  
պիսիներին հարկը անգամ կրկին թէ հայտնի  
պատասխանել չէ նշանակում, թէ թղթակիցների  
սոցիալականութիւնը ոչ ոքին չէ հետաքրքրում: Այն  
հասարակ պատճառով, որ այս փոխախտն աշ-  
խարհում գտնելից շատ անգամ դժուար են ծը-  
նանում, թէ պարապմունքը չէ ազնուացնում մար-  
դուն, այլ բնական բարոյականութիւնը, — այդպիսի  
ախտիցները խցած էլ իրանց են գտնում:  
Վերջերս «Մշակում» տպագրուեց «Հայկ. տե-  
ղական հայ մամուլի կաթողիկոսական խնդրում»  
կառարած գործերի» վերնագրով յօդուածը:

Ընթերցողը իրաւունք ունի կարծել որ գտնէ  
այդպիսի լուրջ, փաստալից, հիմնաւոր յօդուածին  
հակառակորդները կը պատասխանեն լուրջեամբ  
կամ գոնէ խոհեմաբար, սակայն հակառակը դուրս  
եկաւ: Եւ ինչ են անում մեր պարոն խմբագիրնե-  
րը, մէկը սպում է մի յօդուած, միւսը խնդր  
արտասանում և փոխադրաբար միմեանց մօտ  
են ուղարկում ընթերցողին: Եւ ինչ կը տեսնէ  
այդ յօդուածները: — Որ «Չայնի ը բազմացը» մի  
ծառայող է Միլիտանի գործարանում և այլն  
և այլն: Բայց ինչ միտք ունի այդ ամենը, միտք  
համակրում ենք այդ «Հայկ. տեղական» նրա լուրջ  
և գեղեցիկ մտքերի համար և ոչ թէ յօդուածագրի  
այս կամ այն տեսակ անհա լինելուն համար և  
մեր համակրութիւնը մի և նոյնը կը մնար, եթէ  
դրա գործերը լինէին մշակների, ծառաներ, գիւ-  
ղացիների մի խօսքով ռաբիկների, որոնց այդպէս  
ստոր են հաշվում մեր գրականական արխիւով-  
բաները: Միւս կողմից մենք շատ գեղեցիկ ընտ-  
րած ենք տեսնում ստորագրութիւնը և կարծում  
ենք որ մեր պարոնների գլխացաւի մեծ մա-  
սը դրանցին է: Արդարեւ այդ յօդուածը այն տե-  
ղակներից է, որոնց տակ ամենայն ուրախու-  
թեամբ կը ստորագրէր խրաբանչիկը ճշմարիտ  
հայ, այդ յօդուածը հայերի ամենատառաւ մասի  
զգացմանց ժողովածուն է, նրանց ցանկութեան

պոլի, եթէ նա նախապէս և որքան կարելի է վաղ  
ձեռք չէ առնելու պաշտպանողական միջոցներ:  
«...Անա ձեզ մի կապ փայտերի, կապված մի ա-  
մուր պարանով. փորձեցէ խորտակել նրան, և  
այդ չէր յաջողելու և ոչ մէկիդ. բայց եթէ քա-  
կելու ենք այդ կապը, այն ժամանակ և ամենա-  
թույլը ձեռքանից նրանց մինչև վերջին հատը կը  
փչտէր առանձին առանձին...»

Այդ մի խորհրդաւոր երատ էր, որ մէկը հին  
ժամանակների թագաւորներից տալիս էր իր որ-  
դիններին, մեռնելու ժամանակ:

Բազուկի մի քանի հարկերական նաւթային գոր-  
ծարաններից մի նշանաւոր մասը բոլորովին փակ-  
վեցաւ, մնացածները կրեցին սարսափելի վնասներ,  
և այդ ինչու համար, որովհետեւ «Երեսի» և համա-  
ձայնութիւն շունչեցան միմեանց ձեռք ձեռքի տուած  
իրենց առաջ բացված անդրդի եղբայրից յետ ըն-  
կրկելու... և նրանք տարիների մի քանի չըջա-  
նում մէկը միւսից յետոյ փառաւորապէս ներս  
գլորվեցան անդրդի մէջ...

Ինչ չէր կարող անել 300-ի չափ գործարանա-  
տէրերից բաղկացած ակցիոններական մի ընկերու-  
թիւն, երբ նա միջին թուով իր բաժնետիրներից  
4 կամ 5 հազար ռուբլի կապիտալ ստանար, (և  
այդ էլ կարող էր լինել ոչ մի անգամից). և մի-  
թէ նա չէր կարող այն ժամանակ մրցել մի եւրո-  
պացու հետ, որը տասնակի հազարաւոր մղոններ

արտադրութիւնն է, հետևաբար «Չայնի ը բազ-  
մաց»-ը մի անհատ չէ, այլ մի վիթխարի մարմին:  
Ախալքալաքի երկաթագործութեան ցանկութիւնն  
է որ այդ գեղեցիկ «Հայկ. տեղական» տեսութե-  
ան հրատարակիչը:

Տեղւոյ հասարակութիւնը մի ուղերձով շնոր-  
հաւորեց ո. Ներքինի ընտրութիւնը. այդ ուղերձի  
մէջ խնդրում են չը խորտակել իրենց յայտնի  
հրատարակիչը: Ուղերձը վերջանում է հետևեալ խօս-  
քերով. «Թող ձեր օրհնութիւնը ամրապնդէ մեզ,  
որպէս զի մենք են կարողանանք, ըստ մեր հա-  
մուտ կարողութեան, կատարել մեր պարտականու-  
թիւնները» վերաբերութեամբ այդպիսի առաջնակարգ  
Աթուլին:

Ուղերձի տակ ստորագրել են 110 անձինք:  
Խ. Մառանկողեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԳՈՒԽԻՍԻՑ մայիսի 22-ին հեռագրում են  
մեզ. Մայիսի 21-ին, 5 ժամին կէսօրից յետոյ  
Արտաքինի կարկուտ եկաւ խրաբանչիկը հատը  
տալի ձուլի մեծութեամբ և մի ֆոնա ծանրու-  
թեամբ. դրանից յետոյ գետը մեծացաւ և ավե-  
րից դուրս եկաւ. ջրի տակը մնացին բազմաթիւ  
անեղ, մարդիկ, այգիներ և անասուններ: Մանրա-  
մանութիւնները յետոյ:

ԱԳՈՒԽԻՍԻՑ մեզ հեռագրում են մայիսի 22-ին.  
«Երէկվայ աղէտի պատճառով փնտր հանում է  
մօտ 300,000 ռուբլու: Մօտ 70 անեղ ջուրը տա-  
րել է անհետը: Սղախած մարդկանց թիւը հա-  
նում է մինչև 40 հոգու: Փորվածքներ են սկսված»:

Ազդուից ստացանք հետևեալ հեռագիրը այն  
աղետի մասին, որ այնտեղ պատահել է: «Մայիսի  
25-ին առաւօտեան կորածների թիւը 44 է, երէկ  
փրկանքների տակից հանվեցան այդ դիակները,  
կորուստները հաշւում են աւելի քան 300,000  
ռուբլ: Աւելի քան 15 ընտանիք մնացին առանց  
որ և է միջոցների ապրուստի համար, բացի սը-  
րանից շատերի հետ գրկված են բնակութիւնից:  
Բոլորը մեծ կորուստներ են կրել և կարօտ են  
օգնութեան»:

Պ. Յովհաննէս Ստեփանեանցը խնդրում է մեզ  
յայտնել, որ ինչն արդէն թարգմանած վերջաց-

հետևից գալով հազարաւոր ընտանիքներից ապրու-  
ստի վերջին պարէնը խեղ զգալի կերպով վնասե-  
լով Բաղրաթի, նիւթական կողմից, ինչով կարող  
էր այնուհետեւ Բաղրաթն որ և է օգուտ սպասել իր  
արդիւնաբերութիւնից, մինչդեռ նրանից զոչացած  
միլիոնները Եւրոպա էին գնում:

Կատեն որ Նորէլ հաղարաւոր մարդիկ գործա-  
ւորներ է բանեցնում, և դա լաւ է քաղաքի հա-  
մար:

Մ. զօրադրաբար չը կայ և այդ էլ, այդ հոկայ  
գործարանի փոքր ի շատէ շատ ռոճիկներ ստացող-  
ների և առհասարակ բոլոր այնտեղ եղողների 3/4  
մասը շինեցանք են, ի բաց առնելով ապրուս-  
տի համար քաղաքում միակած անհաւ գումարը,  
այդ արդիւնքը ևս... Եւրոպա է գնում...

Ուրեմն մի երկու տարից յետոյ էլ ինչ ունեն  
սպասելու տեղացիները իրենց այդ հարուստ նաւ-  
թային արդիւնաբերութիւնից... ոչինչ:

Իսկ մենք հեռագրանք հարցից. «Լոյս»-ը կազ-  
մակերպվեցաւ: Գործերի ղեկավարութիւնը յանձն  
էր առել Թիֆլիսի յայտնի մի պատուաւոր անձնա-  
ւորութիւն, ընկերութեան անդամներից:

Առաջին անգամից դեռ ևս շատ խորթ էր ըն-  
կերութեան անդամների համար այդ ձեռնարկու-  
թիւնը և նրանք սկսում էին մի տեսակ կասկա-  
ծանքով և ահ ու դողով վերաբերվել դէպի գոր-  
ծը: Եւ յանկարծ գուց տեսնում էին, որ չը նայե-

րած ունի վիթխարի չիւղօի «Մահուան դատա-  
պարտութիւն» վերջին օրը» վերնագրով գրուածը,  
ուստի թող ուրիշները իզուր աշխատանք չը գործ  
դնեն դրա թարգմանութեան վրա:

Ստացանք պրօֆէսոր Անդրէաս Արծրունուց  
նրա նոր բրօշուրը «Über das Vorkommen von  
Zinnstein im Kaukasus»

ՂԱՐԱՍՈՒԹԱԶԱՐԻՑ մեզ գրում են հետևեալը.  
«Ձեր լրագրի № 48-ի մէջ թելուից գրված նա-  
մակը ինձ առիթ տուեց մի քանի խօսք ասել  
պարտեզներում զոչացող միջատների մասին ոչ  
թէ իրեն մասնագէտ, այլ որպէս ականատես, թէ  
ինչպէս են վարվում թրիմում այդ միջատների  
դէմ: Այդպէս 1881 թվից այդ անհոշ հիւրը բուն  
է դրել ամբողջ թրիմում. դրա պատճառով այժմ  
սարսափելի ընկած գրութեան մէջ է թրիմի պար-  
տեղականութիւնը: Յաւանք է տեսնել զարմանք  
առանց տերերների բազմաթիւ պարտեզներ, որ  
դո՛ւ են գնացել այդ միջատներին, որոնք չերամբ  
նմանութիւն ունեն: Այստեղ դրանց գոտեմէջ  
են անհամար և կոյնդոյն են. ուրիշ տեսակներ  
էլ կան, բայց ամենից փնտաւարը յիշեալ միջատն է:  
Նրանք կանաչներ են պէս այդ միջատը գտնւում  
է տերերների մէջ և ոչնչացնում է թէ տերեր և  
թէ ծաղիկը, հասկանալի է, որ երկրորդ տարին  
ծառը չէ կարող պտղատու աշքեր (плоды) պտո-  
րատուել: Գործին ծանօթ անձինք հեշտութեամբ  
ոչնչացրին միջատը առաջին տարում, բայց որոնք  
թույլ տուին երկրորդ և երրորդ տարին, նրանք  
այլ ևս անխորդ եղան ոչնչացնել այդ միջատը:  
Վերջինից միջատի դէմ օգտակար է համարված  
հետևեալ միջոցը. ոչնչ է աշտիկի ծառերի  
կեղերը լաւ մաքրել, որ ոչնչանայ նրանց ձուերը,  
իսկ զարմանք հարկաւոր է մախրակա ծխախոտից  
սիրօպ պատրաստել: Սիրօպ այսպէս են պատ-  
րաստում. պէտք է վերցնել մէկ ֆունտ մախրո-  
կա և լաւ եփ տալ 1 1/2 վրդու ջրի հետ. տաքու-  
թիւնը անցնելուց յետոյ, այդ ջուրը պէտք է ծա-  
ռերի վրա սրկել: Օգուտը բաւական զգալի է:  
Այժմ տեղական թափաբները մախրակայի սիրօպը  
սրկելով են պարսպում: Անցեալ տարի Սիմֆե-  
րոպոլում կազմվեցաւ պարտեզանների մի ընկերու-  
թիւն, որի նիստերի արձանագրութիւնները շա-  
րունակ տպվում են «Севас. Прав. Нисотек»-ի  
մէջ: Յանկացողները կարող են ստանալ այդ  
լրագիրը, որը տարեկան հինգ ռուբլ արժէ, և ման-  
րամասնաբար տեղեկութիւններ ստանալ»:

Լով կառավարչին տուած լիազօրութեան, յայտն-  
վում են մի դեմքին կառավարչներ էլ նրա գը-  
լին:

— Բայց ինչ է նշանակում այդ, պարոններ,  
հարցնում է կառավարիչը:

— Այդ նշանակում է, որ մենք այդպէս ենք ու-  
ղում:

Ի նկատի ունենալով ընկերութեան վարկը,  
տարածանութեանց առիթ չը տալու համար լը-  
ւում է կառավարիչը, և ծիծաղելի էր տեսնել,  
որ կանտորայում ազատ կարգադրութիւններ են  
անում ոչ թէ անդամները միմյան, այլ և նրանց մի  
որ և է բարեկամ-ազգականը: Առաջ է գալիս բա-  
րեւեան խառնակութիւն. մէկը միւսին չէ հաւ-  
կանում, իսկ հետեանքը պարզ է... Երբ նաւի մէջ  
ղեկը ձեռք կառնի խրաբանչիկը մի անհասկացող  
թիւովար, երբ կարգեղեն ղեկավարին դէպի նաւա-  
հանդիստ գնացըր ուղղելու, այն ժամանակ, և  
դա շատ հեշտ կարող է պատահել, նաւն էլ ա-  
լիքներին խաղալիք դառնալով, վերջապէս կը  
խորտակվի զինացը եղող մի ժայռին զարկվե-  
լով:

Յախշտակվելով առաջին անգամից ստացած  
օգուտով, ընկերութիւնը արեց մի քանի սիւալ  
քայլեր: Թուեց մի քանիսը:

Ա. ընկերութիւնը կազմակերպվեցաւ թէ չէ նա  
զլիստորապէս սկսեց տարանջների գնելը աւելաց-



վաճառական



կանի տները, քարած, մաքուր փողոցները, բազմաթիւ ծառերը, այգիները լիքը ծաղիկներով արհեստական լճերը ու գետակները իրանց փողով մակոցներով: Մէկ բազմութիւն անցնում են տառնեակ կառքեր ամեն տեսակի, ձիաքարը երկաթուղու գեղեցիկ գնացքները, ֆայե-տոնները իրանց միջի տիկիներով և այլ բոլորի ձայնից, կարծես թէ ձեր վրա մէկ նոր եռանդ է գալիս: Ահա դուք տեսնում էք, որ կառքի վրա նստած կառապանը, որպիսի հետաքրքրութեամբ կարդում է ձեռքին բռնած լրագիրը: Ահա մէկ խեղճ օրիորդ առաջարկելով ձեզ ծաղիկներ, ըստապաւ ձեռքանից մի քանի ֆէնիլ և գնելով մէկ պատկերազարդ թերթ, գնաց նստեց ծառի շուտ-ըտ: Գուր զնում էք փողոցով: Ձեր աչքից չեն հեռանում զարդարված մազադիրները, որոնց ա-հագին ապակիները երևում են ներսի ապրանքնե-րը: Ամեն մի քայլափոխում ձեզ պատահում են զրաւաճառանոցներ և բէստորաններ: Վերջինների սրահը զարդարած է ծաղիկներով և այնտեղ նըս-տած ամեն մէկ պարոնի առաջ դրած է մէկ ա-հագին բաժակ դարձնուր և մէկ լրագիր:

Այն բազմաթիւ մարդկանցից և կանանցից, որոնք ձեզ պատահում են փողոցներում, ոչ մէկն էլ պարտաւ չէ, որպէս լինում է մեր կողմերում: Ամբողջ ճաղաքը կը շրջւի, բայց մէկ հատ կողմ, մէկ հատ համր էլ պատահի ձեզ, որ ձեռ-նից ողորմութիւն ինչդէ: Ահա տեսէք. պատկեր կախած նշանատախտակի վրա գրած է. «Հոգե-մոլութիւն խնդրել և չարչիւթիւն անելը սաստիկ արգելուի է»: Անդամական թերութիւն ունեցող մարդիկը կերակրվում են առանձին աղքատանոց-ներում, իսկ առողջ մարդը տեղս միշտ կարող է գործ գտնել, շնորհիւ բազմաթիւ գործարանների:

Փողոցներում ի միջի այլոց աչքի են ընկնում և փողբիկ կառքեր, որոնք մէջ չենք ընծա: Այդ կառքերում քաղաքի մոտակայքից բերում են կաթն և ուրիշ մթերքներ: Մեր երկրի գեղապիւն իւզով և կաթով լցրած պղնձե ամանները գնում է իր ուսերին, որ քրտնելով քաղաք տանէ, բայց չէ մտածում որ սրա համար կարելի է ունենալ մէկ շատ փողբիկ կառք ու լծել բակի տանիքի շենքից մէկին կնոջ ուսերը հանդիստ թողնելով:

Եթէ որ և է մէկ մազադիր ապակիներից ներս նայէք, գուր կը տեսնէք որ ամեն մի առարկայի վերա կախված է մէկ թղթի կտոր, որի վրա գրած է առարկայի գինը: Եւ այդ գրածից վաճառակա-նը երբեք չէ չեղվում, այնպէս որ սակարկութիւն տեղի չէ ունենում: Իսկ մեր կողմերում:

— Ինչ է այդ մահադի գինը, հարցնում է Պո-ղոսը մտնելով Ղուկասի խանութը:

— Ե՛հ, ինչ պիտի լինի, տար էլի: Գէ, գինը ասա, տեսնես:

— Ձեզ համար երկու բուլի և օթմանաստն կօպէկ, իսկ ուրիշն երեքից պակաս չեմ տալ:

— Ե՛հ, ես էլ մի բան ասեմ, Ղուկաս: Երկու բուլիով տուր, 10 արշին տանեմ:

— Ե՛հ, Պողոս-աղա, Աստուած միայ, երկու չի-տուն առնէ է, բայտ խանութի քրէճը, բայտ ծառա-ները վարձը, բայտ... Գէ որ կնպէս է երկու բու-լի յիտնում տար, թող քեզանից չաշխատեմք:

— Երկու չեկօպէկ \* ) մի կօպէկ ասել չեմ տալ, ասում է Պողոսը ու դուրս գնում:

«Պողոս-աղա, այ Պողոս-աղա: Զը, տալիս ես տուր: Գէ մի բան ասելաքցուր: Զէս կօպէկ: Էլա, եկ տար, մեր Պողոս-աղան ես: Պողոսը առնում է մահադը ու գնում, իսկ նրա ետեւից Ղուկասը մտքովն ասում է.

— Ելի մէկ փիթիկ փող աւել առի: Եւ այդ բոլորից յետ յայտնվել է մէկ նոր լրագիր ու քարդում է թէ հարկաւոր չէ վաճառական-ներին հարուածել (իւզ բանը սրան կասեն), որով հետո մեր միւս դասակարգերն էլ այդպիսի թե-րութիւններ ունենալու բայց միջի մեր լրագրութիւ-նը չէ մտրակել և վատ հողատրականներին, և վատ ուսուցիչներին և վատ ինտելլիգենցիային, և վատ երեցիներին և այլն: Որ և է ինչ մէկ դա-սակարգի թերութիւնները ուղղելու ամենալաւ մի-ջոցը այդ թերութիւնների վրա ծիծաղելն է, եթէ միայն այդ ծիծաղի ետեւում արտաւոր է թաղն-ված:

Միւս կողմանէ քահանայի, ուսուցչի թերու-թիւնը վաճառում է իր հօտին, իր ուսումնարանին: Իսկ վաճառականը որովհետեւ միշտ յարաբերու-

թիւն ունի օտար ազգերի հետ, իր վատ արար-մունքով արատ է գցում ամբողջ ազգի վրա: Եթէ այսօր ամեն տեղ հալածում են հրէաներին, եթէ լուսաւորեալ ազգերը արհամարհում են ամբողջ հրէայ ազգը՝ սրա պատճառը հրէայ վաճառական-ներն են:

Երիտասարդ վաճառականներ, աշխատեցէք որ մեր խղճով ազգի վրա արատներ չը լինեն: Որովհետեւ պատահում են տեղս ուսանելու գալ-կամեցող հայեր, ուստի անօգուտ չէր լինի երկու խօսք էլ ասել նրանց համար:

Օտարականը տեղս գալով կարող է վարձել մէկ լաւ սենեակ իր բոլոր հարկաւոր իրեղէննե-րով, սեղաններով, աթոռներով, պահարաններով, դիւանով, մահճակալով, երես լուսնալու պղնձ-րով, լամպայով, պատի ժամացույցով, զարդարված պատկերներով ու ծաղկամաններով:

Ճանապարհը պարտաւոր է ամենայն առաւօտ իր հաշին տալ սենեակատիրոջ երկու բաժակ սուրճ մէկ փողբիկ հացի հետ: Եւ է կատարում նոյնպէս բոլոր ծառայութիւնը: Այդ բոլորի հա-մար նա ստանում է ամսական 20 մարկ, որ ուս-նաց փողով անում է 10 բուլի: Տեղական առան-ձին կանտորաներ կան գրամը փոխելու համար, ուր այժմ ուսնաց 100 բուլի: Եւ 207 մարկ, ուրեմն մէկ մարկը արժէ համարեա 50 կօպէկ:

Այնքանը այժմ հաշին: Այ միայն օտարները, այլ տեղացիները շատերը բէստորաններումն են ծառայում: Բէստորաններ կան, ի հարկէ, ասելի լաւե-րը և ասելի վատերը: Միջակ բէստորանում գուր կը ստանաք մէկ միւս բաժակ դարձնուր, մէկ ա-ման սուրճ և մէկ բաժին մսեղէն կերակուր, ձեր ցանկացածին համեմատ: Հայր սահմանափակ չէ: Եւ բոլորի համար վճարում էք 50 ֆէնիլ, կամ 25 կօպէկ: Եթէ գուր չը կամենաք զարկուրը խմել կամ սուրճ ուտել, դարձեալ մի և նոյնը պիտի վճարէք: Միւս անգամ կը շարունակենք

Ս. Թառայեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵ

— Կ. Պօլսի հայոց Ազգ. ժողովը, որ ա-մեն տարի մայիսի սկիզբը իր նստուհին բացումը կանէ, այս տարի ես նոյն ըրած է և առաջին գործողութիւնը եղած է ընտրել իր Մայր-դիւանը: Պ. Տիգրան Եւսեփեան ընտրուած է Ա. ատենա-պետ: Յիշեալ պարտը դատաւոր է, բայց ձան-չցուած է անկախ քաղաքութեան տէր անձ, երկար ատեն Ազգ. վարչութեան պետ եղած է, ինչպէս նաև ուրիշ ատեն ալ Ազգ. ժողովը ատենապետ: Բ. ատենապետ ընտրված է Քրիստոստուր Գա-ղարոսեան, որ ասիէ առաջ ալ նոյն պաշտոնը վարած է և սննդալ տարի կաթողիկոսական խնդրոյ տաք միջոցին ինքն եղած էր միշտ Ազգ. ժողովի ատենապետը: Իսկ Գ. ատենապետը-ն արտուած է Թորոսեան Յովհ. էֆ. որ ուրիշ ատեն ալ նոյն պաշտոնը վարած էր, վարչութեան ա-տենապետը եղած էր և յարջ ու համարում էր

վայելէ Պօլսոյ երկրասարդութեան մէջ, թէպէտ ինքն ես պաշտօնեայ լինի:— Եւսեփեան Տի-գրան էֆ. զուրկ էր այն նոր խումբի որ Ազգ. ժողովը մեծամասնութիւնը կը ներկայացնէ չա-փաւոր յառաջադիմական խումբ անուան ներքեւ: Այս ընտրութիւնը ցոյց կուտայ թէ՛ այդ խումբը, որ Ներսէս պատրիարքի համակրողաց խումբն է այժմ մեծ ոյժ ունի Պօլսոյ մէջ և թէ հակառակ խումբը, որոնց պարագլուխ է պ. Փափաղեան, այժմ անօր է ու և դեր կատարելու մէջ:

— Այս օրերս Կ. Պօլսոյ Բերայի դատարանին առաջ տեսնուած է պ. Գուլաբազը և պ. Գուրգէ-նի դատը: Առաջինը մի հոկտեմբեր ամսնաւո-րութիւն է, որ անցեալ մարտի 30-ին, երբ Ազգ. ժո-ղովը նիստը ետ մնաց, ինքն պատրիարքարան գնալով խիստ հարուածներ պ. Փափաղեանի և Ազգ. ժողովը ատենապետի պ. Գուրգէնի: Յիշեալ պարտը ուրիշ անգամներ ես բէլլելիք չեմ տալ: Փոփաղեանի դէմ, բայց նա չէր ուզած թըր-քաց դատարանին դիմել: Ազգ. ժողովը միջամու-թիւն չը հրաւիրելու համար, տակաւ պ. Փափա-ղեանի այս խոհեմութիւնը տեսալ մը քաջալեր ե-ղաւ ընդդէմ պ. Գուլաբազը, որով սա ես սկսաւ շատանցել իւր գնահատութիւններն: Գատաւա-նը բաւական հետաքրքրական էր: Ի միջի այլոց մի հետաքրքրական կէտ,— պ. Գուլաբազը, երբ վկայութիւն կը կոչվին ընդդէմ իրեն, միայն համար կը յայտարարէ, թէ նորա վկայութիւնը չէ և չէ կարելի ընդդէմ իւր վկայութիւնը (դաւա-լօղ) այսինքն ուսուցիչ է և դատարանը այնքան իրական կը համարէ այս յայտարարումն,

որ և ոչ իսկ կը հրաւիրէ ամբաստանալը: Պ. Գուլաբազը կը դատաւարարուի 15 օր բանտար-կութեան և երկու ասիկ տուգանքի:

— Կ. Պօլսոյ «Neue Freie Presse» լրագրին հա-ղորդում են, որ պ. Նելիզովը և Լօրդ Գիւֆերին մի առանձին յայտարարով յիշեցին Բ. Գրանը, որ թիւքաց կառավարութիւնը մինչև այժմ չը կա-տարեց Բերլինի դաշնագրի վճիռները թիւքը-պարսկական սահմանական դիմը որոշելու վերա-բերմամբ: Ռուսաց դեսպանը Բ. Գրան առաջար-կեց, որ ուսնաց կօմսարները Օսմանեան կայս-րութեան լիազօր անձանց հետ միասին նշանակեն նոր սահմանը: Այդ առաւանդակաւ նախագիծը առաջարկող յայտագիրը, «Times» լրագրի խօսքե-րով, շատ փափուկ լեզուով էր գրված: Այդ բանին Բ. Գուլաբազը պատասխանեց, որ ուսն և անգլիա-կան կօմսարները, սահմանական դիմը որոշելիս, առաջնորդվում էին ուսնաց տեղագրական քար-տէզով, որը օսմանեան կառավարութիւնը անկա-նօն հրատարակեց, թղթակցի խօսքերով Բ. Գու-լաբազը պահանջում է, որ այդ խնդիրը վճռվի Կ. Պօլսի կոնֆերենցիայում, բայց պ. Նելիզովը պն-դում է այն բանի վրա, որ իրանը կօմսարները և լիազօրութիւն ունեցող անձինք բուն իսկ տեղի վրա քննեն այդ սխալները: Լօրդ Գիւֆերինը պաշ-տպանում է ուսնաց ներկայացուցիչն:

— Եվէյցարական Բերն կանտոնից «Հալվաթի գործակալութեան» հղում են, որ ամեն օր չլէյ-ցարական մաքսատան պաշտօնաների մէջ ընդ-հարուսներ են պատահում: Խտակաւ միմիստ-րութիւնը այդ առիթով դիմեց Բերնի կառավա-րութեանը, և խտակալի ու Եվէյցարական մէջ գրադրութիւն սկսվեց: «Հալվաթի գործակալութիւ-նը» յայտնում է, որ Հոսթէրա թագաւորի միմիս-տրները ցանկութիւն յայտնեցին ամբողջ սահմա-նական դիմ վրա վերադարձնելու պահպան դրքը նշանակել:

— Կալիբէից «Journal des Debats» լրագրին հեռագրում են, որ Նուբար-փաշան առաջարկեց Սուլթան-փաշային Եգիպտոսի ներկայացուցիչ լի-նել Լօնդոնի կոնֆերենցիայում, բայց նա հրա-ժարվեցաւ: Այդ հեռագրից կարելի է դատել, որ Կալիբէի կառավարութիւնը թոյլտուութիւն է ըս-տացել սրտագամաւոր ուղարկել ապագայ միջադ-գային ժողովը, բայց վերջինիս լրագրերը ճշտ փառսել չունի այդ հարցը վերջնականապէս վը-ճուված համարելու համար:

— Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ 1871 թիւ մայիսի 25-ի տարեդարձին, Պէր-Լաշէզ գերեզմանոցում ոչինչ ցոյցեր չեղան: Պո-լիցիան դրանց դերեզմանոցի բոլոր անցքերը և մի քանի կէտերը: Ժամանակի առ ժամանակ մի որ և է քաղաքացի զվարթաց մօտենում էր դե-րեզմաններին, կանգնում էր լուռ և խորին յարգան-քով նրանց առաջ, ապա զանազա հեռանում էր գարմանուղով այն բանի վրա, որ իր շուրջը տես-նում է միայն պօլիցիական գործակալատարներին: Գերեզմանների վրա դրել էին անթաւաճ ծաղիկ-ները կազմված փունջեր և անկէլ էին հինգ շահիլ ծառեր, ըստ աւանդութեան: Ռէ երեկոյան, 150 մարդիկ դնացին գերեզմանոցը: Զաւար պրտա-սանկցան, որոնց ծախաւարում էին: Անձրեւ սաի-պեց ցրվել այդ ժողովին:

— «Temps» լրագրի խօսքերով պ. Վօլովիլի— «Վիեննայի Սուրհանդակ» լրագրի նախկին խմ-բագիրը, որը, ինչպէս յայտն է, մասնակից է Կրաշչիկովի գործին, նամակով դիմեց իշխան Բիւ-մարկին, որի մէջ հաստատում է, թէ 1882 թիւն Բերլինի կառավարութիւնը խնդրում էր իրան նրա չարախանական թերթը ամենօրեայ թերթի դարձնել և տալ նրան գերմանական քաղաքակա-նութեան համար նպատաւոր ուղղութիւն, տա-րեկան 100,000 դուլէն սուբսիդիայով, որ պէտք է վճարվէր երեք տարիայ ընթացքում:

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵ

Աւստրիական թագաւորական դուքս Կա-յց և Լուի իւնը սուլթանի հարեմին:— Թագաւորականութիւն Ստեֆանին հարեմում ընդու-նեցին միայն սուլթանի մայրը, նրա իսկական կի-նը և չորս աւագ կանայքը: Հարեմի մնացեալ կա-նայքը թագաւորականութեան միայն հեռուից տե-սան, որովհետեւ սուլթանը և սուլթանի մայրը վախճանում էին Ետիկէտի դէմ մի բան անել: Իսկ ամբողջ հարեմը դեռ ևս թագաւորականութեան դա-ւալով մի ամիս առաջ մեծ յուզմունքի մէջ էր: Սուլթանի կինը և չորս աւագ կանայքը արտա-սուրը աչքերին համաձայնեցին անհամար ընդու-

նել իշխանուհուն, վախճանով էտիկէտի հակա-ռակ մի բան անել. այդ երկուքը մինչև անգամ գերակշռում էր թիւքաց կանանց յայտնի հետա-քրքրութեանը: Ամենքը պատճառ էին բերում, որ այդպիսի դէպք երբեք չէ եղել, թէ ոչ որ նրան-ցից չը գիտէ եւրօպական էտիկէտը և չեն կարո-ղանայ ընդունել իշխանուհուն: Այդ պատճառով իշխանուհու այցելութիւնը հարեմին խիստ պաշ-տօնական և ծանր ձևականութիւն էր: Յետեւ խմբ-ված մի քանի կանայքը սկսեցին բարձրաձայն լալ, իսկ իշխանուհուն ընդունողները ամեն ջանք գործ էին դնում զսպել իրանց: Ի յիշատակ հարե-մի այցելութեան սուլթանի մայրը ընծայեց իշխա-նուհուն թիւքաց խալաթ երկու չարք աղաման-դեպ կոճակներով և փիրուդեպ զարդարանք:

Սուլթանի մարգարէն Մահմէտ իր սե-փական հայացքն ունի հեռագրատները, երկաթու-ղիները և շողիտների վրա: Ինքն-Սամիի անունով մի հնդկացի վաճառական, որը մի քանի շաբաթ առաջ առևտրական գործերով գտնվում էր մար-գարէի աթուանիստ Էլ-Օրէիլ քաղաքը, տե-սակցութիւն ունեցաւ Մահմէտի հետ և նրա մօտ ձաշի հրաւիրվելու պատկին արժանացաւ: Հաշի ժամանակ տեղի ունեցած խօսակցութեան ժամա-նակ Մահմէտ յայտնեց, որ ինքն երբեք չի թող տայ երկաթուղիներ չինիւ, որովհետեւ գրանցից մարդիկ, մանաւանդ զինուորները, քնքշանում են ծուլ են դառնում: Երկաթուղիները նպաստում են միայն բարբրի ապականութեանը, մանաւանդ այն ժամանակ, եթէ կանանց և տղամարդկանց թիւլ է տրվում այնտեղ նստել միայն: Երկաթու-ղիները թուլացնում են նոյնպէս ատուածպաշ-տութիւնը, որովհետեւ հաւատացեալների համար ամօթ է և անպարտաւոր աղօթել վազօնում: Սակայն Մահմէտ խոստովանեց, որ ինքն անհամար դեռ չէ տեսել երկաթուղի: Երեկոյան, ընդհակա-ռակն, հաւանում է նա, որովհետեւ նրանց վրա տղամարդիկը կանանցից բաժանված են և հաւա-տացեալները կարող են օրէկըով սահմանված ձէտերը կատարել: Ինչ որ վերաբերում է հեռա-գրական թերթին, Մահմէտ խիստ օգտակար է հա-մարում նրան և ասում է, որ ինքն ամենակն չի ընդդիմանայ հեռագրական նոր գծեր անցկացնե-լուն:

Մի գերմանական քաղաքում նոր քաղաքաշինի ընդունելութեան համար կարգով կանգնեցրին սպիտակ շորեր հագած մատաղահաս աղջկանց Առաջին կարգում կանգնեցրին գեղեցիկ աղջիկ-ներին, իսկ երկրորդ կարգում տղաներին: Երբ քաղաքաշինը շատ գոհ եղաւ այդպիսի ընդու-նելութիւնից և նա առաջին կարգի բոլոր ասուր օրիորդներին ձակատները համարեց, երբ երկրորդ կարգի օրիորդների համարեցաւ հերթն եկաւ, ծերուկը յայտնեց որ ինքն յոգնեց և, դիմելով իր օգնականին, ասեց՝ Համարեցեք նրանց իմ տեղը:

Դօկտոր Բրաունը, ասում է «НОВОСТИ» լրա-գիրը, Կապտանի նախկին բուսարանը իրան նպատակ դրեց նկարագրել անտառապահութիւնը գնալուան երկրներում, և նրա գրքերի վերջին հատորը նուիրված է Ֆինլանդիային: Նրա խօսքե-րով, այդ լճերի է անտառապատ լեռների եր-կիրը թագաւորական անտառների աշագին տա-րածութիւններ ունի, ուր շինականները կտրում են անտառը որքան կամենում են, որպէս ջուրը և օդը իրանց սեփականութիւն համարելով նրան: Այդ չարքի առաջն առնելու համար, անտառնե-րի դուրսը հետադուրեւ համար 1869 թիւն նշանակված յանձնաժողովը, առաջարկեց սեփա-կանութեան իրաւունք տալ չինականներին թա-ղաւորական անտառները որչա մօտի վրա: Մին-չև այդ ժամանակ շինականները սուլթանութիւն ու-նէին այդ անտառի մի մասը, հողի մարքված տարածութեան վրա վարուցանը անել երեք տարիայ ընթացքում և գնալ սուրճ տեղ: Սակայն անտառները օճեցանեւ հետեանք Ֆինլանդիա-յում, Բրաունի կարծիքով, այնպէս վտանգաւոր չէ, որպէս ուրիշ երկրներում, միայն կլիման առե-լի չոր է դառնում, իսկ այդ վտանգաւոր չէ մի այդպիսի խոստ. երկրում, երկուք չը կայ, որ դե-տեղը և անտառները կը վարքանան և կը չորանան, որպէս խտակալում, կամ հողը կը ծածկվի վեա-տախար բոցերով, որպէս հարաւային Աֆրիկա-յում:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՔԻՐՈՒՆԻ

\*) Բուլլուց:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսէսեան Հայոց Ազգային Հոգեւոր  
դպրանոցում հոգաբարձական խորհրդարա-  
նի մէջ Մայիս ամսույ 30-ին երեկոյեան 8  
ժամին կը լինի անուրդ (առանց կրկնա-  
ճուրղի) կապալով տալու նոյն դպրանոցի  
կարուածքը № 49 (ընծայած հանգուցեալ  
Յարութիւն Արդեանցի) որ դառնալով է  
կուր գետի հեղեղատի (սաղի) վրա: Պայմա-  
նաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձու-  
թեան դիւանատան մէջ ամէն օր, բացի  
կիրակիէն և տօներէն, առաւօտեան 10-ից  
12 ժամն:

Մամուլի տակից դուրս եկաւ

ԿԸՌԹ-ԿԸՌԹ

Վարդիկ մէկ արարուածով հեղ. Վ. Մա-  
րութեան. հրատարակութիւն Ն. Սիմե-  
ոնեանցի. գինն է 25 կօպէկ:  
Պահաւոր դառնալով է երկամսամ. Ն. Սի-  
մեոնեանցի գրականութեամբ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

„ՎԱՐԺԱՐԱՆԻ“

№ 4 և 5

ՀԵՏԵՐԵԱԼ ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԱՄԲ

Ժառանգականութիւն կրթութեան համեմատութեամբ.—Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.—Բնա-  
դրութիւնը վարժարանի մէջ.—Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ.—Դաստանգութիւն.—ՏԵՐ-  
ՆԵՐԻ, Թարգ. Գ. ՇԱՀՐՈՒԳԱՆԵԱՆ.—Մանուկների խոցութեան մասին.—Գործար ԳՈՒ-  
ԼԻՑ.—Թուարանութիւնն իբրեւ միջոց աշակերտի ինքնագործունէութեան զարգացման  
համար.—Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ.—Ուսուցչի կոչումը.—Հեղ. ԿՈՒՐՏՄԱՆԻ.—Թարգ. Ա. ՍՊԱ-  
ՐԱՊԵՏԵԱՆ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ՝ լոյս և կեանք (կը շար.) Ա. ԲԵՇՄԵՆԵԱՆ.—Բնական  
գիտութեանց յարաբերութիւնը գիտութիւնների ամբողջութեան հետ.—Դասախօսու-  
թիւն պրօֆէսոր Յ. ՀԵՄՇՈՂԻ.—Թարգ. ԱՐԻՍՏՈՂՈՍ ԹՈՎԱՆԵՆԻՍԵԱՆ.—Այլ և այլք:  
—Ցայտարարութիւններ:

Խմբագիր—հրատարակիչ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

2,000

ամենից ՀՈՉԱԿՎԱՆ բժիշկներ  
վկայում են և խորհուրդ են  
տալիս

ԴԿ. ՊՈՊՊԻ

ԳՏԱՆ ՄԵՋՈՑՆԵՐԸ ԱՍԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երանը և ատամները պահպանելու այժմ գո-  
յութիւն ունեցող որպէս ամենալաւ միջոցներ:  
30 տարվայ ընթացքում փորձված

ԱՆԱՏԵՐԻՆԵԱՆ ԲԵՐԱՆ  
ՈՂՈՂԵԼՈՒ ԶՈՒՐ

ԴԿ. Ի. Գ. ՊՈՊՊԻ ՎԻԵՆՆԱ-  
ՅՈՒՄ.

Աւտորիտական պաշտական ատամնաբոյժի  
ուշնչացնում է ատամնաբուժութեան բժշ-  
կութեան հիւսիսը լինելը պահպանում  
դժաբբութեամբ ատամները, ոչնչացնում է  
վատ հոտը, թեթեւացնում է մանուկների  
ատամների բուժանելը, պահպանում  
միջոց է դիֆթերիաի դէմ, անհրաժեշտ  
է հանրային ջրեր զործածելու ժամանակ. մի-  
շիւն արժէ 1 ր. 50 կ., կէս շիւն 1 ր. և 1/3  
շիւն 60 կօպէկ:

Ատամնային փոշի խոտրից, արդէն  
կարճատե օրծածութիւնից յետոյ ա-  
տամները կատարելապէս սպի-  
տակացնում է, չը փչացնելով նրանց:  
Խրաքանչիւր կարօրկայի գինը 70 կ.:  
Ատամնային օծանելի պաստա-  
պակէ կարօրկաներում 1 ր. 20 կօպ.,  
փորձված միջոց է ատամները մաքրելու  
համար:  
Ատամի անուշահոտ պաստա-  
քանի ներքին մասը և ատամները ա-  
ռողջ պահպանելու համար, մի կտորը  
արժէ 35 կօպ.:  
Ատամային պլօմբա ամենաու-  
ղիղ միջոցը դատարկ ատամները անձնա-  
պէս պլոմբելու համար: Փոքրիկ կարօ-  
րկայի գինն է 2 րուր:

ՊՈՊՊԻ ԽՈՏԻ ՍԱՊՈՆ

Որքանների բշտիկների, երեսի բծերի, երան-  
ների, կոշտ մազերի և բուռնների քոսի,  
ընդհանրապէս կաշու հիւանդութիւնների և  
անմաքրութիւնների դէմ:  
Ծախվում է թիֆլիսում դեղատան ապ-  
րանքների առևտուրի կովկասեան բնիկու-  
թեան մէջ:  
(2—1)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԿԱՅԵՆԻ ԿՏԱԿԸ

ՎԵՊԵՐ

ԶԱԽԵՐ-ՄԱԶՈՒԻ

Թարգմանեց

ԲԱՖՖԻ

Գինն է 1 րոնի, 20 40Պ.

Թիֆլիսում վաճառվում է

«Մշակի» խմբագրատանը—«Կենտրոնական  
գրականամստոցում»—«Կովկասեան գրա-  
վաճառանոցում».—Պ. Շահվերդեանի պալի-  
թիոնում:

Օտարաբարդացիք կարող են դիմել  
Թարգմանչին այս հասցեով:

Въ ТИФЛИСЪ. Редакция „МПАКЪ“.

РАФФИ.

23—30

ԲԱՖՖԻ  
„ԶԱՎԱԼԻԴԻՆ“

տպւած է հեղինակի պատկերով

Գինն է 1 րոնի

Թիֆլիսում վաճառվում է

Հեղինակի մօտ,—«Կենտրոնական գրադա-  
ռանոցում».—«Կովկասեան գրականա-  
մստոցում».—Շահվերդեանի պալիթիոնում,  
—Շահվերդեանի և Տէր-Յովսէփեանցի ծը-  
խախտի մագաղկներում:

Օտարաբարդացիք պէտք է դիմեն հե-  
ղինակին այդ հասցեով:

Тифлисъ. Редакция „МПАКЪ“.

10—20

ՊԱՍՏԱՆՆԵՐ (ՕՅՈՒՄ)

Ամենանոր նկարներով եկող սեղօնի համար  
ստացված են մեծ քանակութեամբ

ԵՂԲ. ՏԱՐՆՈՊՈԼԻ

Օրէսայի դործարանի պահեստում: Լօ-  
րիս-Մէլիքովկայայ փողոց (Փօստային), Զու-  
բալովի տունը, հոգեւոր սեմինարիայի հան-  
դէպ:

ԲՈՂՈՐ ՊԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱ-  
ՆԱԿԱՆ ԵՆ՝ 10 ԿՈՊԵԿԻՑ ՍԿԱՄԻ: 7—30

ԹԵՅ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁԻ այս  
տարի չափազանց ԳՈՅՆԱՒՈՐ

ԵՒ ՀՈՏԱԻԷՏ: Սյդ Թէյից ստացված  
է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ  
50,000 ՖՈՒՆՏ և ծախվում է 25%  
էժԱՆ քան թէ ուրիշ տեղ, այսինքն լաւ  
ԿՕՆԳՈ Թէյ 1 ր. 10 կ. մինչև 1 ր. 2-  
կ., շատ լաւ ԿՕՆՖԱ Թէյ 1 ր. 40 կ., գե-  
րազանց ՄՕՆԻԳ Թէյ 1 ր. 60 կ. (այս  
Թէյը ամեն տեղ ծախվում է 2 ր. և 2 ր.  
50 կ.), ԿԱՍԱՌ Թէյ 1 ր. 80 կ. և ամե-  
նալաւ ՖՈՒՂԵ-ՖՈՒ Թէյ 2 ր. Փոքրը  
քարը առանց թղթի: Նոյն տեղը սովորա-  
բար լինում է 500 ԵՐԱԹԷ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ  
6 ր.—60 ր.: ՎԵՐԱԿԱՆԳԵՆՈՂ մազերի հա-  
մար: Երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ կովկասի  
համար, շօխուղ ՖՐԱՅ, շէֆրէրի ԴԱՆԱԿ-  
ՆԵՐ, հրացաններ ԴԱՌԻ, բէլովերներ ՎԵՐ-  
ԼԻ, ԲԱՐՆԵԻԻ Թամբեր, ՇՎԱՐՅԻ ալբոմներ:  
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻԸ դան-  
վում է թիֆլիսի մէջ, Գվորցովի փողոցի  
վրա Արծրունու գալլէրէում № 156  
57, 158, 159, 160: Նոյն տեղը մեծ քա-  
նակութեամբ ԵՐԵՒԱՆԵՐԻ և տղամարդկանց  
մահճակալներ 25% էժան քան թէ ուրիշ  
տեղ 10% էլ զիջումն: 30—100

Լոյս տեսաւ „ՊՈՊՊԻՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐ-  
ԳԵՐԻՑ“ Գաշնակի համար, կապուց Խ. Մ.  
Կարա-Մուրզայ. գինն է 1 ր. 35 կ. Ծախ-  
վում է Կենդրոնական գրականամստոցում,  
հետզհետէ կը ստացվին Մօսկվայից այս օրի-  
նակ աշխատութիւնները:

3—3

ՍՏԱՄՈՐՄԱՅԻՆ ՑԱՆԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ ԲՈՒԴՈ՝

Այս գինին շատ համեղ է և 25 տարիների ընթացքում աջողութեամբ գործ է  
գործում հեռեկայ դէպքերում: ԱՌՈՐԻՍԿԻ ԲԱՅԱԿԱՌՈՒԹԻՒՆ, ՍՏԱՄՈՐՄԻ ՑԱ-  
ՆԵՐ, և ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐԱՊՈՂՈՒԹԻՒՆ:

Պէպսին „Բուգօ“ ճանաչված է փարիզի բժշկական Ակադէմիայից և ստացել  
է առաջին մեդալներ հեռեկայ աշխարհահամբանքին՝ ՓԱՐԻՉԻ 1867 թ., ՎԻԵՆՆԱՅԻ  
1873 թ. ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ 1876 թ. ՓԱՐԻՉԻ 1878 թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.  
Կովկասի համար պահեստ. ԴԵՂԱՍԱՆ ԱՊՐԱՆԲԵՐԻ ԱՌԵԻՏԻ ԿՈՎԿԱՍՈՒՄ  
ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԵՖԼԻՍԻ ՄԷՋ:

23—80 (և շ.)

Զ. Գրիգորեանցի „Կովկասեան Գրականամստոցի“ Հրատարակութեամբ

Լոյս տեսաւ

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Եօրինած

ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

անունով աշխատակրութեան երկրորդ մասն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԾՈՒԹԻՒՆՆԵՐ:

Գինն է 1 ր. 25 կ.: Գումարով առնողներին 1 ր.:—Գիրքը բաղկացած է 47  
մեծագիր երեսից:  
Նոյն տեղում ծախվում է մի և նոյն գրքի Առաջին մասն—ԱՐՁԱԿ, միևնոյն  
գնով:—Գիրքը բաղկացած է 470 մեծագիր երեսից: 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

ԱՄԵՆԱԿԱՐԵՐՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ ամեն տեսակ վաճառականների համար և մատչելի  
ձեռնարկ իւրաքանչիւրի համար, որ կամենում է ուսումնասիրել առևտրական գոր-  
ծողութիւնները ու հաշուարարութիւնները:

„ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵԻՏԻՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ“  
վաճառվում է Կենդրոնական գրականամստոցում, պ. Շահվերդեանի պալիթիոնում,  
պ. Եփրեմ Ծատուրեանցի լամպային մագաղկում, պ. Տէր-Սարգսեանի թղթա-  
վաճառանոցում և եղբայր Ծովիմանյանի բանկային գրասենեակում:

Օտարաբարդացիք դիմում են այս հասցեով. Въ Тифлисѣ, Сололакская  
улица, домъ Корганова, Уредителю „Коммерческыхъ курсовъ“, Степану  
Мануэляничу. Գինն է 2 րուրի, (սակաւաթիւ տպւած): Նոյն տեղից կարե-  
լի է ստանալ ձրիապէս Առևտրական կուրսերի ծրագիրը և կանոնները:

8—8

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԱՄԲ ԳՆԴԱՊԵՏ ՄԵԼԻԲ-ՀԱՅԿԱԶԵԱՆԻ

Լոյս տեսաւ

ԴՐ. ԱԻ. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑԻ

„ՀՈՂԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ և ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ“

որի նիւթը վերցրած է հեղինակի 1883 թուին կարգացած բաղադրանքական երկ-  
րորդ դասախոսութիւնից և ներկայացրած աւելի մշակված ձևով:

Գինն է 40 կօպ. կանխիկ վճարելի: Ծախվում է Կենդրոնական գրականամստո-  
ցում, Կովկասեան գրականամստոցում և հեղինակի մօտ, որին պիտի դիմել Թիֆլիս,  
Лабораторная ул., № 5.

Հրատարակութեան բաժանորդներին կուղարկվին օրինակները անյապար:

Բոլոր եօթը դասախոսութիւններին ստորագրվիլ ցանկացողները վճարում են թիֆլի-  
սում 1 ր. 50 կ., թիֆլիսից դուրս 1 ր. 65 կ.:

Նորա բաժանորդները կը ստանան առաջին դասախոսութիւնը.—«Ազգաբնակչութիւնը և  
աղգաբնակչական շարժումները, որի հատի գինն է 40 կօպ.: